# ΣΧΟΛΙΚΗ ΧΡΟΝΙΑ 2026-2027
# ΠΛΑΙΣΙΟ ΜΑΘΗΣΗΣ ΚΑΙ ΠΡΟΓΡΑΜΜΑΤΙΣΜΟΣ
# ΑΡΜΕΝΙΚΑ Β΄ ΛΥΚΕΙΟΥ
# Β΄ ΤΕΤΡΑΜΗΝΟ

## ՀԱՅԵՐԷՆ

## ΣΤΟΙΧΕΙΑ ΜΑΘΗΜΑΤΟΣ

| | |
|---|---|
| **ΕΒΔΟΜΑΔΙΑΙΕΣ ΠΕΡΙΟΔΟΙ ΔΙΔΑΣΚΑΛΙΑΣ: 4** | **ΕΞΕΤΑΖΟΜΕΝΟ** |

**Διδακτικά εγχειρίδια-Βιβλιογραφία:**

ՀԱՅ ԿԵԱՆՔ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ 1
Հեղինակ՝
Յարութիւն Քիւրքճեան
Բառարան
Գործնական Բառարան Հայերէն Լեզուի
Հեղինակ՝
Հայր Անդրանիկ Կռանեան

**Υλικά και μέσα που θα χρησιμοποιήσουν οι μαθητές κατά τη διδασκαλία του μαθήματος:**

Նշուած թեմաներով յաւելեալ նիւթեր ըստ պահանջքի, նաեւ լեզուական աշխատանքներ եւ քերականական ու բառագիտական վարժութիւններ պիտի տրուին աշակերտներուն համացանցէն, ինչպէս նաեւ ուսուցիչին կողմէ պատրաստուած:
Յաւելեալ թեմաներ կարելի է աւելցնել ըստ ուսուցիչի հայեցողութեան, նկատի ունենալով աշակերտներուն պահանջքը եւ հետաքրքրութիւնները: Դասաւանդութեանց ընթացքին կ՝ըլլայ արուեստագիտութեան օգտագործում:

## ΓΕΝΙΚΟΣ ΣΚΟΠΟΣ (ΓΕΝΙΚΟΣ ΔΕΙΚΤΗΣ ΕΠΙΤΥΧΙΑΣ)

Հայերէն լեզուի դասերուն նպատակն է զարգացնել աշակերտներուն իմացութիւնը եւ հմտութիւնները ինքնուրոյն հաղորդակցելու եւ իրենց խօսքը բերանացի եւ գրաւոր կերպով ու նշուած մակարդակով դրսեւորելու համար: Հայերէն լեզուի դասերը կը միտին ստեղծել իմացութիւն հայ մշակոյթի, արժէքներու եւ աւանդութիւններու: Մայրենի լեզուով աշակերտները պիտի ստեղծեն իրենց ինքնութիւնը: Տարբեր տեսակի աշխատանքներու միջոցով պիտի պատրաստուի գիտակից եւ մշակուած անհատը՝ մեր դարի պահանջքներուն եւ մարտահրաւէրներուն դիմաց: Հայերէնի դասընթացքը միտում ունի զարգացնել աշակերտներու հմտութիւնները, ստեղծագործական կարողութիւնները, քննադատական մտածողութիւնը, ինքնազարգացման ձգտումը եւ կարողութիւնը, 21րդ դարու համապատասխան՝ ըլլալու գործօն քաղաքացիներ:

**ΑΝΑΜΕΝΟΜΕΝΑ ΜΑΘΗΣΙΑΚΑ ΑΠΟΤΕΛΕΣΜΑΤΑ (ΔΕΙΚΤΕΣ ΕΠΑΡΚΕΙΑΣ)**

Աշակերտները պիտի կարենան՝
-Հետեւիլ եւ հասկնալ խօսակցութիւն, դասախօսութիւն, ձայնասփիւռէն եւ հեռատեսիլէն հաղորդումներ, լուրեր, ֆիլմեր:

-Ինքնուրոյն կարդալ եւ հասկնալ տարբեր նիւթերով գրութիւններ, տեղեկութիւններ, նամակներ, յօդուածներ:
-Մասնակցիլ իրենց ծանօթ նիւթի մը շուրջ քննարկումի եւ յայտնել իրենց տեսակէտները :
-Ամփոփել տեղեկութիւններ տարբեր աղբիւրներէ՝ յօդուածէ, հարցազրոյցէ, ներկայացումէ:
-Կարդալ պատմուածքներ եւ պատասխանել հարցումներ բերանացի եւ գրաւոր կերպով:
-Կարդալ բանաստեղծութիւններ, անհրաժեշտութեան պարագային օգտագործելով բառարան ՝եւ խօսիլ ու գրել հիմնական գաղափարներու մասին:
-Կարդացած տարբեր բնոյթի գրութիւններէ , տարբեր նիւթերու շուրջ գրել իրենց մտածումները:

Οι μαθητές με την ολοκλήρωση του μαθήματος θα πρέπει να είναι σε θέση να -

Աշակերտները պիտի կարենան՝

-Արտայայտուիլ բերանացի եւ գրաւոր կերպով մայրենի լեզուի եւ լեզուներու ունեցած կարեւորութեան մասին:

-Խօսիլ տեսագրութեանց եւ երգերու միջոցով իրենց լսած եւ հասկցած կարեւոր գաղափարներու մասին:

-Ներկայացնել տարբեր նկարագիրներ, մտածելակերպեր, վերաբերմունք եւ կեցուածքներ:

-Բացատրել ընկերային տարբեր խնդիրներ եւ երգիծանքին դերը անոնց բարելաւման համար:

-Վերլուծել բերանացի եւ գրաւոր կերպով կարդացած տարբեր բանաստեղծութիւններ՝ հայրենիքի, մանկութեան, մարդկային զգացումներու մասին:

-Միասին քննարկել եւ առանձին գրել քաղաքացիական պարտականութիւններու եւ մարդկային իրաւունքներու մասին:

-Գրել փոքրիկ բանաստեղծութիւններ եւ պատմութիւններ:

**ΔΕΙΚΤΕΣ - ΕΝΟΤΗΤΕΣ**

**ԹԵՄԱՆԵՐ / ՆԻՒԹԵՐ**

**Մայրենի լեզու**
- Կարեւորութիւնը
- Ստեղծագործել մայրենի լեզուով
- Լեզուներու դերը
- Լեզու եւ շարժապատկեր

**Մարդը եւ շրջապատը**
- Մտածելակերպեր
- Վերաբերմունք
- Կեցուածք
- Երգիծանք
- Դիմանկարներ

**Երաժշտութիւն**

Գրականութիւն եւ երաժշտութիւն
Գաղափարներ
Երգին դերը
Երգերով լեզուի զարգացում

**Արմատներ**

Յիշողութիւններ
Պայքարներ
Երազներ

**Բանաստեղծութիւն**

Հայրենիք
Մանկութիւն
Զգացումներ

| **ΑΞΙΟΛΟΓΗΣΗ** | |
|---|---|
| **ΓΡΑΠΤΗ**<br>**Ενιαία γραπτή αξιολόγηση στο τέλος του τετραμήνου** | **ΠΡΟΦΟΡΙΚΗ / ΣΥΝΤΡΕΧΟΥΣΑ**<br>**(από τον/τη διδάσκοντα/ουσα)** |
| **ΜΟΡΦΗ** | **ΜΟΡΦΗ** |
| Հայերէն լեզուի Քննութիւն կիսամեակի Աւարտին<br>(135 վայրկեան) | i. Աշակերտին մասնակցութիւնը դասարանին մէջ - Հետաքրքրութիւնը դասին հանդէպ եւ ամէնօրեայ բերանացի մասնակցութիւնը, նախաձեռնութիւն ունենալը, գործակցութիւնը տարբեր աշխատանքներու, նաեւ ընդհանուր ներդրումը դասի ընթացքին<br><br>ii. Տնային աշխատանք - Դասարանին մէջ բացատրուած նիւթի հիման վրայ հարցում-պատասխան, բառագիտութեան վարժութիւններ, լեզուական աշխատանքներ, շարադրութիւն, դասաւանդուած եւ նախապէս տեղեկացուած նիւթի վրայ գրաւոր ստուգում<br><br>iii. Դասարանային գրաւոր աշխատանք - Դասաւանդուած նիւթի հիման վրայ հարցումներ, բառագիտութեան վարժութիւններ, լեզուական աշխատանքներ, շարադրութիւն, դասաւանդուած եւ նախապէս տեղեկացուած նիւթի հիման վրայ գրաւոր ստուգում<br><br>iv. Ուսումնասիրական եւ ստեղծագործական աշխատանք - Անհատական կամ խմբային, տրուած նիւթի եւ առաջադրանքներու հիման վրայ |

| | |
|---|---|
| | Յաւելեալ կամաւոր աշխատանք - Դասանիւթին առնչուած սակայն դասէն |

| ΠΡΟΓΡΑΜΜΑΤΙΣΜΟΣ | | |
|---|---|---|
| | ΕΝΟΤΗΤΕΣ / ΚΕΦΑΛΑΙΑ | ΠΕΡΙΟΔΟΙ ΔΙΔ. |
| | **Մայրենի լեզու**<br><br>Կարեւորութիւնը<br>Ստեղծագործել մայրենի լեզուով<br>Լեզուներու դերը Լեզու եւ շարժապատկեր | 11 |
| | **Մարդը եւ շրջապատը**<br><br>Մտածելակերպեր<br>Վերաբերմունք<br>Կեցուածք<br>Երգիծանք<br>Դիմանկարներ | 12 |
| | **Երաժշտութիւն**<br><br>Գրականութիւն եւ երաժշտութիւն<br>Գաղափարներ<br>Երգին դերը<br>Երգերով լեզուի զարգացում | 10 |
| | **Արմատներ**<br><br>Յիշողութիւններ<br>Պայքարներ<br>Երազներ | 12 |
| | **Բանաստեղծութիւն**<br><br>Հայրենիք<br>Մանկութիւն<br>Զգացումներ | 15 |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |

| | | |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |